«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Սովորողների իրավագիտակցության բարձրացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ -Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ – Մարիաննա Վարդանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ – Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն…….....3

Հասարակագիտություն և իրավագիտակցություն……4

Ի՞նչ է իրավագիտակցությունը……11

Իրավագիտակցության տեսակները……...……13

Եզրակացություն……19

Օգտագործված գրականության ցանկ……20

Ներածություն

Հասարակության իրավագիտակցության բարձրավումը բխում է բոլորի շահերից: Այդ իսկ պատճառով հանրապետության հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների իրավագիտակցության մակարդակի բացահայտման հիմնախնդիրների վերհանման ուղղության պետությունը մշակել է մի շարք ծրագրեր:

Առանց իրավագիտակցության երկրում իրավական ճգնաժամ կլինի, ինչն էլ հանգեցնում է իրավական նիհիլիզմի, որից էլ՝ հանցագործությունների թվի աճի, հենց այս հարցն է, որ կարմիր թելի պես անցնում է «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման պրոցեսում:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում քննության է առնվում դպրոցական միջավայրում իրավագիտակցության աստիճանը: Բայց առարկան դասավանդելիս աշակերտների մեջ անհրաժեշտ է սերմանել այն գաղափարը, որ իրավագիտակցությունը ավելի վաղ է ծագում մարդու մոտ՝ նրա ծննդյան պահից, մոր կաթի հետ, երբ մայրը, դաստիարակելով երեխային, սովորեցնում է՝ ինչն է կարելի և ինչը չի կարելի:

Իրավագիտակցության խնդիրն առկա է ամենուրեք:

Ունենալով իրավագիտակից քաղաքցի՝ կունենաք զարգացած պետություն:

Մեր աշակերտները բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում «Հասրակագիտություն» առարկայի նկատմամբ, մասնավորապես իրավունքի նորմերի նկատմամբ, և այդ իսկ պատճառով, ցանկալի է, որ գործող մասնագետների կողմից էլ միջոցներ գործադրվեն ուսումնակա ծրագրերով միջոցառումներ կազմակերլու և մեր ազգաբնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացնելու ուղղությամբ:

Ցանկացած ոլորտում, ցանկացած նպատակին հասնելու, կենսունակ ծրագրեր մշակելու և դրանցող հասրարակական կյանքում փոփոխություններ առաջարկելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վերհանել ոլորտում առկա խնդիրները, հասկանալ դրանք առաջացնող պայմանները և պատճառները:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ-ում իրավական մշակույթի և իրավագիտակցության մակարդակը հասարակական տարբեր հարաբերություններում հեռու է կատարյալ համարվելուց:

Հասարակագիտություն և իրավագիտակցություն

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդման արդյունքում սովորողները փորձում են անձի իրավագիտակցությունը, իրավական մշակույթը փոխկապակցել իրենց իրավակաան դաստիարակության մակարդակի, կրթության և իրավաչափ վարքագիծ դրսևորելու ներքին պահանջմունքի հետ:

Կոնկրետ անհատի իրավագիտակցության բարձր մակարդակը հասարակության իրավական կարգավիճակի, բարդ մակարդակի նախադրյալն է, և բնականաբար հենց այդ անձի իրավական զարգացվածության բնութագիրը:

Հասարակագիտություն առարկան անդրադառնում է նաև աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ որպես անչափահասների հանցավորության կանխման միջոց:

ՀՀ-ում օրեցօր շատանում են կոռուպցիոն դրսևորումները՝ վերածվելով սովորական երևույթի: Հասարակության ոչ մի շերտ էապես չի գիտակցում ստեղծված իրավիճակի ծանրությունը ու չի վերաբերվում կոռուպցիային իբրև վնասակար երևույթի: Վերը նշված խնդրի հիմնական պատճառներից մեկը հասարակության ցածր իրավագիտակցության մակարդակն ու քաղաքական կամքի բացակայությունն է, որը կախված է կրթական ցենզից:

Քաղաքական կամքի ձևավորման համար անհրաժեշտ է բարձրացնել հասարակության իրավագիտակցության մակարդակը, որն էլ կստիպի մարդկանց վերաբերվել կորուպցիային իբրև կործանիչ երևույթի:

Մարդկանց իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու լավագույն եղանակը կրթության ոլորտում կոնկրետ «Հասարակագիտություն» առարկայի միջոցով հակակոռուպցիոն ծրագրերի ներդրումն ու իրագործումն է:

ՀՀ կառավարության կողմից մշակված 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մեջ առաջարկվել է կրթության ոլորտում իրականացվող մի շարք բարեփոխումներ, որոնք կփոխեն ստեղծված պատկերն ու կբարձրացնեն մարդկանց իրավագիտակցության մակարդակը:

«Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ կարողանում ենք նպատակ դնել հասարակության մոտ վաղ շրջանում բարձրացնել հասարակության մատաղ սերնդի իրավագիտակցության մակարդակը, ձևավորել իրավական մշակույթ, որը հետագայում մեծ դեր է ունենալու յուրաքանչյուրի կյանքում: Աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով Մայր բուհն ամեն տարի կազմակերպում է նման հանդիպումներ աշակերտների և ուսանողների հետ:

4Նման ծրագրով համալսարանականները նախատեսում են առաջիկայում այցելել նաև այլ դպրոցներ:

Արատավոր երևույթները ժամանակակից աշխարհում այնքան են շատացել, որ չափազանց վտանգավոր են դարձել ինչպես երեխաների, այնպես էլ ապագա հասարակության համար: Հետևաբար, հրատապ է դարձել դրանց դեմ պայքարելու խնդիրի լուծումը: Հետևաբար գերակա խնդիր է դարձել աճող սերնդի վրա դաստիարակչական ներգործությունների սահմանների ընդլայնումը և երեխաների տարբեր խմբերի հետ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման նոր տեխնոլոգիաների ներդրումը, և որպես կանոն նրանց նկատմամբ անհատական մոտեցման մեթոդիկայի կատարելագործումը:

Հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները բնականաբար ազդում են նոր սերնդի դաստիարակության վրա, որի պատճառով էլ հաճախակի են դարձել է երեխաների օրինաչափ վարքի շեղումները:

Ֆրանսիայի սոցիոլոգ Էմիլ Դյուգեյմը ժամանակակից հասարակության վիճակը բնութագրում է որպես բարոյական վակուում, երբ նախկին արժեքները չեն համապատասխանում հասարակական նոր հարաբերություններին: Այս մոտեցումը լիովին կարելի է վերագրել նաև մեր հասարակությանը առավել ևս երեխաներին, որոնց մեջ տեղի է տեղի ունենում արժեքների վերագնահատում և հասարակական հարաբերությունների, հասարակության նկատմամբ կենսադիրքորոշման փոփոխություն:

«Հասարակագիտություն» առարկայի թեմաները խորապես նպաստում են աշակերտների մոտ իրավագիտակցության ձևավորմանը և զարգացմանը: Իհարկե, դասագիրքը իրավագիտակցություն ձևավորելու և սերմանելու միակ աղբյուրը չէ: Փորձառու ուսուցիչը դա կարող է իրականացնել արտադասարանային աշխատանքների ժամանակ:

Հաշվի առնելով որ ՀՀ հասարակության բնականոն կենսագործունեության հիմքում ընկած ժողովրդական, իրավական, սոցիալական պետության երաշխիքները որոշակիորեն պայմանավորված են հասարակության իրավական գրագիտության մակարդակով, ուսումնասիրություններ են իրականացրել հանրապետության հանրակրթական դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում

սովորողների իրավագիտակցության մակարդակի բացահայտման հիմնախնդիրների վերհանման ուղղությամբ:

Իրավագիտակցության բարձր մակարդակը քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքն է: Իրավագիտակցության բարձրացումը բոլորիս շահերից է բխում՝ թե՛ հասարակության անդամների, թե՛ իրավակիրառողների:

Ընդհանրապես ոչ մի երկրում չկա մոդել, որով հնարավոր լինի բացահայտել իրավագիտակցության մակարդակը և խնդիրները: Հետաքրքրականն այնն է, որ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչները գտնում են, որ առարկայի նյութերը վերանայման կարիք ունեն: Համահեղինակների ներկայացրած առաջարկություններից մեկն էլ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը: Համահեղինակները փաստում են, որ մեր սովորողները բավական մեծ հետաքրքրություն ունեն իրավունքի նորմերի նկատմամբ ցանկալի է, որ գործող մասնագետների կողմից էլ միջոցներ գործադրվելն ուսումնական ծրագրերով միջոցառումներ կազմակերպելու և մեր ազգաբնակչության իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Արատավոր երևույթները ժամանակակից աշխարհում այնքան են շատացել, որ չափազանց վտանգավոր են դարձել ինչպես երեխաների, այնպես էլ ապագա հասարակության համար: Հետևաբար հրատապ է դարձել դրանց դեմ պայքարելու խնդրի լուծումը: Գերակա խնդիր է դարձել աճող սերնդի վրա դաստիարակչական ներգործությունների սահմանների ընդլայնումը և երեխաների տարբեր խմբերի հետ իրավագիտակցության բարձրացման վերաբերյալ աշխատանքի կազմակերպման նոր տեխնոլոգիաների ներդրումը, նրանց նկատմամբ անհատական մոտեցման մեթոդների կատարելագործումը:

Մեր հասարակության մեջ աճում են այնպիսի անբարենպաստ միտումներ, ինչպիսիք են հանցագործությունների «երիտասարդացումը, դրանց խմբային դրսևորումների ակտիվացումը: Ժամանակակից աշխարհում երեխաների պաշտպանությունը և խնամքը պահանջում է հարցի վերաբերյալ համակարգված մոտեցման մշակում: Վերոհիշյալը մեզ մղում է հիմնախնդրի լուծման համար դպրոցում ակտիվ աշխատանք կատարել ոչ միայն կանխարգելու բացասական դրսևորումները, այլև ձևավորելու բարոյական բարձր որակներ:

Հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, բնականաբար ազդում են նոր սերնդի դաստիարակության վրա, որի պատճառով էլ հաճախակի են դարձել երեխաների օրինաչափ վարքի շեղումները:

Ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում և ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում, չափազանց կարևոր է դառնում բարոյական և ազգային արժեքների ճիշտ գնահատումը, իրավագիտակցության ձևավորումը և ապագա քաղաքացու ճիշտ դաստիարակությունը: Հենց դպրոցն է այն օղակը, որը մեզ կօգնի իրականացնելու վերոհիշյալ խնդիրը:

Այսօր դպրոցի առջև դրված հիմնական գործառույթներից պետք է առավել կարևորել ապագա սերնդի մոտ իրավագիտակցության դաստիարակության խնդիրը: «Հասարակագիտություն» առարկան բավականաչափ ունի բոլոր նախադրյալները վերոհիշյալ գործառույթը իրականացնելու համար: Հենց կրտսեր դպրոցական տարիքում է դրվում այդ արժեքների հիմքերը: Ուսումնասիրելով «Հասարակագիտություն» առարկան՝ հենց կրտսեր տարիքում աշակերտների մոտ ձևավորվում է իրավագիտակցության գաղափարի ամրակայումը, ինչը երեխաները սկսում են սեփական պարտականությունների կատարումից և զարգացնում են մինչև հայրենիքի համար օգտակար գործունեությունը:

Իրավագիտակցության դաստիարակության և զարգացման և առհասարակ երեխայի մեջ ցանկացած իրավական և բարոյական որակի ներդրման համար «Հասարակագիտություն» առարկան ամենաարդյունավետ պայմաններն է ընձեռում, առավել ևս, երբ դրան նպաստող գործոններ կան՝ օրվա դասանյութը, ուսուցչի վարպետությունը և այլ:

«Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում ընդգրկված նյութերը չափազանց հետաքրքիր Են: Իսկ դասապրոցեսի հիմնական նպատակը օրվա դասանյութի դաստիարակչական և ուսուցողական գործառույթների իրականացումն է: Թեմաների առկայությունը դեռևս հիմք չի հանդիսանում պնդելու, որ դրանք խորապես նպաստում են իրավագիտակցության դաստիարակմանը: Իհարկե, դասագիրքը իրավագիտակցություն դաստիարակելու միակ աղբյուրը չէ: Փորձառու ուսուցիչ դա կարող է իրականացնել նաև այլ առարկաների դասավանդման ընթացքում, ինչպես նաև արտադասարանային աշխատանքների ժամանակ: ինչպիսին էլ լինի

դասագրքում եղած թեմաների բովանդակությունը, երեխայի միջավայրը, դպրոցը մշտապես պետք է գիտակցի, որ իր վրա է դրված այն մեծ պատասխանատվությունը,

ըստ որի ինքն է ցանում մի շարք կարևորագույն որակների սերմերը երեխայի մեջ, և որքան ճիշտ մշակվեն և խնամվեն դրանք, այնքան որակյալ պտուղներ կտան:

«Հասարակագիտություն» առարկան նպատակ է հետապնդում իրավագիտակցություն դաստիարակելու և սերմանելու շնորհիվ աշակերտների մեջ կանխարգելել նաև վարքային շեղումները:

Դժվար չէ եզրակացնել, որ դպրոցներում իրավագիտակցության խնդիրը լուծելու համար դասագրքերում ընդգրկված նյութերն առավել մեծ հետք են թողնում դաստիարակության գործում, քանի որ դրանց յուրացումը և քննարկումը պարտադիր բնույթ է կրում:

«Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ աշակերտները ստանում են իրավագիտակցության բարձրացման, աշխարհայացքի զարգացման հնարավորություն, ինչպես նաև սովորում են գնահատել մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

«Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ մարդու իրավունքների վրա քաղաքացիական հասարակության հիմնարար արժեքների վերհանմանն ուղղված համակարգված ծրագրով աշակերտներին ներկայացվում է մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը, ինչը հնարավորություն է ընձեռում բարձրացնել իրենց իրավագիտակցության մակարդակը և զարգացնել աշխարհայացքը:

«Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ իրականացվում է հանրային իրազեկման գործառույթ: Եվ այս գործառույթի շրջանակներում հնարավորություն է տրվում իրազեկել աճող սերնդին այն իրավական, քաղաքական, տնտեսական կարևոր կատեգորիաների մասին, որոնց նրանք առնչվելու են որպես ժողովրդավարական պետության քաղաքացիներ իրենց ամենօրյա կյանքում: Աշակերտների հոգեբանության մեջ պիտի մտնի օրինապաշտության գաղափարը: Նրանք պետք է ստանան ճիշտ իրավական կրթություն:

Հայաստանում առաջին անգամ լույս է տեսել «քաղաքացիական բացատրական բառարան»: Նախաձեռնությունը գերմանական միջազգային համագործակցության ընկերությանն է GIZ, որը այն հրատարակել է հարավային կովկասում իրավական և դատական բարեփոխումների խորհրդատվության ծրագրի շրջանակներում: Բառարանը ինքը պարունակում է տարբեր իրավական, քաղաքական, տնտեսական, միջազգային ինստիտուտների կատեգորիաների մասին բացատրական տերմիններ:

Բառարանը հեղինակել են իրավագիտության դոկտոր Ա. Վաղարշյանն ու քաղաքագիտության թեկնածու Ն. գալստյանը: Բառարանը տպագրվել է 3.000

օրինակով, բաժանվել դպրոցներին և գրադարաններին: Քաղաքացիական կրթություն բացատրական բառարան նախատեսված է աշակերտների համար:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

«Հասարակագիտություն» առարկայի միջոցով աշակերտներին ներկայացվում են Սահմանադրության կարևորությունն ու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է հասարակության մոտ վաղ շրջանում բարձրացնել իրավագիտակցության մակարդակը, ձևավորել իրավական մշակույթ, որը հետագայում մեծ դեր է ունենալու յուրաքանչյուրի կյանքում:

Աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով մայր բուհն ամեն տարի կազմակերպում է հանդիպումներ աշակերտների հետ:

Ելնելով այն գաղափարից, որ այսօրվա երիտասարդը վաղվա օրվա պետության պատասխանատուն է, ուստի պետք է հստակ գիտակցել, որ ինչպիսին դաստիարակենք նրան, այնպիսին էլ նա կլինի տարիներ անց՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ հասարակական դիրք կզբաղեցնի: Տվյալ պարագայում հարցը վերաբերում է իրավական դաստիարակությանն ու իրավական գիտելիքների ձևավորմանը, որը պետք է սկսել հնարավորինս վաղ տարիքից: Սակայն այստեղ հարց է առաջանում, թե արդյո՞ք հնարավոր է բացահայտել քաղաքացիների, տվյալ պարագայում աշակերտների իրավագիտակցության մակարդակը: Ա. Անտիպևը և Կ. Անտիպևան նշում են, որ «իրավագիտակցության ուսումնասիրման դժվարությունը որոշվում է ամենից առաջ նրա անթերի բնությամբ, այնպիսին, ինչպիսին մարդու գիտակցության բնությունն է, որը մինչ օրս մնում է որպես հանելուկ ժամանակակից գիտության համար: Իրավագիտակցության ուսումնասիրման դժվարությունը պայմանավորված է նրանով, որ այն օրգանապես կապված է մարդու գիտակցության հետ, սերտորեն միահյուսված է քաղաքական, բարոյական, կրոնական գիտակցության հետ: Իրավագիտակցությունը որակապես տարբեր է իրավաբան-պրակտիկների, իրավաբան-գիտնականների, իրավախախտների և օրինապահ քաղաքացիների մոտ: Այս կապակցությամբ ո՛չ ազգային, ո՛չ միջազգային մասշտաբով մինչ օրս ոչ մեկին չի հաջողվել ստեղծել իրավագիտակցության ուսումնասիրման միասնական մեթոդաբանություն:

Շարունակելով միտքը՝ նույն հեղինակները կարծում են, որ իրավագիտակցության մակարդակը կարելի է բացահայտել հարցման միջոցով,

որոնցում կլինեն ինչպես իրավական առաջադրանքներ, այնպես էլ իրավական նորմերի իմացության վերաբերյալ հարցեր: Դրանք թույլ կտան բացահայտել իրավական հարաբերությունների առանձին ոլորտների կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակը:

«Հասարակագիտություն» առարկայի ուսումնասիրման արդյունքում աշակերտների իրավագիտակցության մակարդակի բարձրացման արդյունավետ կառուցակարգերի մշակումը և իրականացումը կարող է հիմք հանդիսանալ հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի կատարելագործման համար, ինչպես նաև դրականորեն ազդել օրինականության և իրավակարգի վիճակի վրա: Վերջիններս էլ իրենց արտացոլումը կգտնեն իրավաստեղծ գործունեության իրավական վարքագծի վրա:

«Հասարակագիտություն: առարկայի դասագիրքում եղած գործնական աշխատանքների և սոցիալական հարցումների միջոցով կարելի է բացահայտել, թե արդյո՞ք աշակերտների մոտ կա ցանկություն ավելացնելու սեփական իրավական գիտելիքները, հետևաբար նաև՝ իրավագիտակցության մակարդակը: «Հասարակագիտություն» առարկան առարկայական խնդիրների լուծումից զատ, նաև լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիրակության, հասարակական- քաղաքական գիտակցության ձևավորման ու զարգացման ուղղությամբ:

Հասարակագիտությունը բացահայտում է հասարակական հարաբերությունների պարզ համակարգ, թույլ է տալիս սովորողներին յուրացնել աշխարհայեցողության եվ քաղաքականության տարրերը և լուծել նմանատիպ այլ խնդիրներ:

«Հասարակագիտություն» առարկայի հիմնական նպատակը մարդու և հասարակության վերաբերյալ գիտական պատկերացումներ ունեցող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական

արժեքներով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու և իրավագիտակից քաղաքացու ձևավորումն է:

Քաղաքացիական հասարակության կայացման գործում մեծ է քաղաքացու դերը, իսկ քաղաքացի ձևավորելու գործում՝ մեծ դեր է կատարում դպրոցը:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը նպաստում է սովորողի մոտ քաղաքական ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը: Ուսուցման գործընթացում սովորողի իրավագիտակցությունը բարձրացնելու համար շատ

կարևոր է ինքնուրույն գործնական աշխատանքների կատարումը, ինչը նաև կնպաստի սովորողների գիտելիքների հարստացման եվ ամրապնդմանը: Հասարակագիտության դասընթացում պետք է ձևավորվի գիտելիքների այնպիսի համակարգ, որը կնպաստի քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ են կայուն գիտելիքներ, ժամանակակից կյանքի պայմաններին համապատասխան կարողություններ և հմտություններ ունեցող անձնավորություն: Այդ առումով շատ կարևոր է «Հասարակագիտություն: առարկայի ուսումնադաստիարակչական հնարավորությունների ավելի լայն կիրառումը:

Հասարակության մեջ իրավագիտակցության բարձրացումը ժամանակավոր գործընթաց է և այն պետք է սկսել հենց դպրոցներից՝ ամենատարբեր մեխանիզմներ ներդնելով, որպեսզի աշակերտները գիտակցեն դրա կարևորությունը:

«Հասարակագիտություն» առարկայի միջոցով է, որ աշակերտները կարողանում են հստակ պատկերացում կազմել պետության և հասարակության կյանքում իրավագիտակցության անհրաժեշտության մասին, գիտակցում են ներկա պայմաններում բարձր իրավագիտակցության կարևորությունն ու կիրառական նշանակությունը:

Այսօր քաղաքակիրթ հասարակությանը բնորոշ կարևոր ու, թերևս ամենաէական բնութագրիչներից է բարձր իրավագիտակցությունը: Աշակերտը պետք է գիտակցի, որ հենց ինքն է ապագայում նպաստելու Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ի՞ՆՉ Է ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից աշխարհում անհատի՝ որպես սոցիալապես և քաղաքականապես ակտիվ անձի ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունի իրավագիտակցությունը՝ հիմնված ազատական-ժողովրդավարական արժեհամակարգի վրա: Միայն այս դեպքում է հնարավոր անհատի մոտ ձևավորել քաղաքական գործընթացներում դրսևորվող ինքնուրույն քաղաքական վարքագիծ:

Իրավագիտակցությունը հասարակության սոցիալ-իրավական, քաղաքական, հոգևոր մշակութային զարգացման կարևորագույն բաղադրատարրն է: Այն դեռևս վաղ ժամանակներից ուղեկցել է մարդկությանը իր բնապատմական զարգացման

գործընթացում՝ ունենալով կարևոր դեր հասարակական կյանքում, այդ իսկ պատճառով իրավագիտակցության հիմնախնդիրը տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվում է տարբեր գիտությունների շրջանակներում:

Իրավագետներն ուսումնասիրում են իրավագիտակցությունը առավելապես որպես իրավական հայացքների և պատկերացումների ամբողջություն, որոնք պայմանավորում են անհատի վարքի իրավաչափությունը (կամ անիրավաչափությունը):

Փիլիսոփաները ուսումնասիրում են իրավագիտակցությունը որպես հասարակության գիտակցության ձև:

Սոցիոլոգների համար այն կարևորվում է որպես սոցիալական վերահսկողության ինստիտուտ:

Պատմաբանների համար իրավագիտակցությունը պատմականորեն զարգացող երևույթ է:

Հոգեբաններն իրավագիտակցության մեջ կարևորում ենք անձի հոգեբանական առանձնահատկությունները որի բովանդակությունն արտացոլվում է մարդու կողմից ընկալվող իրավունքի աշխարհում և վերջինիս կյանքում: Իրավագիտակցության իրավական կողմը կազմում են իրավական երևույթների նկատմամբ մարդկանց սովորություններն ու զգացմունքները:

Մեր հասարակության մեջ խնդիրների մեծամասնությունը առաջանում է իրավագիտակցության ցածր մակարդակի պատճառով: Իրավաբանական գրականության մեջ իրավագիտակցության մասին առավել ընդունված տեսակետն է, որ իրավագիտակցությունը, դա հասարակական գիտակցության ձև է, որի միջոցով գնահատվում է իրավունքը, արժևորվում է գործող իրավունքի դերը և նշանակությունը, որոշվում են դրա զարգացման ցանկալի ուղղությունները: Այսինքն, առանց իրավագիտակցության իրավունքը չի կարող գնահատվել և զարգանալ, ուստի և հասարակության մեջ առանց իրավագիտակցության բարձրացման անհնար է դրական փոփոխություններ սպասել: Մարդկանց իրավագիտակցության բարձրացմամբ կանհետանան բազմաթիվ հասարակական խնդիրներ:

Մարդն իրավունքներից զատ ունի նաև պարտականություններ, սա պետք է հասկանալ ու ոչ միայն փորձել պաշտպանել իրավունքներ, այլ նաև կատարել պարտականություններ:

Իրավագիտակցության բարձրացման համար պետք է, որպեսզի յուրաքանչյուրը իմանա և գիտակցի իր իրավունքները և պարտականությունները:

Գիտելիքներով զինված մարդը միշտ էլ հաղթում է:

Ինչպե՞ս կարելի է զարգացնել և բարձրացնել իրավագիտակցությունը մեր հասարակության մեջ: Դա պետք է սկսել կրթական համակարգից՝ ներդնելով իրավական ուսումնասիրության որակյալ համակարգ:

Իրավագիտակցության տեսակները

Գիտակցությունը հատուկ է միայն մարդուն: Գիտակցությունն առաջացել է այն ժամանակ, երբ մարդու կենդանի նախնին հասարակական էակ է դարձել:

Իրավագիտակցություն է գիտակցության ոլորտ է, որը կապված է իրավանշանակալից երևույթների հետ, մարդկանց, սոցիալական խմբերի հայացքների և գաղափարների միասնություն է, այն վերջիններիս պատկերացումներն են, որոնք արտահայտում են իրենց վերաբերմունքի օրինականության, պատշաճ իրավակարգի, օրինաչափությունների և ոչ օրինաչափությունների նկատմամբ: Կամ, ավելի կոնկրետ կարելի ասել, որ իրավագիտակցությունը իրավունքի ընկալման ձև է, որպես սոցիալական իրականության յուրահատուկ (սպեցիֆիկ) երևույթ:

Իրավագիտակցություն է բաժանվում էերեք խմբի՝

1. հասարակական
2. խմբային
3. ինդիվիդուալ կամ անհատական

Հասարակական իրավագիտակցություն

Հասարակական իրավագիտակցությունը հասարակական գիտակցության մի ճյուղ է, որն իր մեջ արտացոլում է հասարակական կենցաղի տարաբնույթ երևույթները, հասարակական իրավագիտակցությունը իրավունքի իդեալոգիայի և իշխող իրավական մտքի, հայացքներ և գաղափարների փոխգործումը, որոշում է իրավաստեղծ և իրավակիրառիչ մեխանիզմների ուղղվածությունը: Այլ կերպ ասած, հասարակական իրավագիտակցությունը ավելի լայն խմբի, տվյալ դեպքում, հասարակության կողմից իրավունքի ընկալումն է:

Խմբային իրավագիտակցություն

Ի տարբերություն հասարակական իրավագիտակցության՝ խմբային իրավագիտակցությունը, կարելի է ասել, կապված է նեղ խմբային շահերից, որոնք շատ հաճախ, հակառակվում են հասարակական շահերին: Խմբային

գիտակցությունը կարող է լինել նաև ասոցիատիվ: Քիչ չեն այն դեպքերը, երբ հասարակության մեջ առաջանում է խմբավորումներ, որոնց շահերը հակասում են հենց տվյալ հասարակության, որտեղ որ ձևավորվել են, շահերն, գաղափարներին: Տվյալ դեպքում նրանց իրավագիտակցությունը այլ է հասարակական իրավագիտակցությունից:

Անհատական կամ ինդիվիդուալ իրավագիտակցություն

Անհատական կամ ինդիվիդուալ իրավագիտակցություն ը իմաստային առումով ր իր բնույթով տարբերվում է վերը նշվածներից: Այն նշանակալի ձևով տարանջատում է իրավագիտակցությունը ավելի փոքր սոցիալական խմբերի, որոնց մեջ ընդգրկված է նաև անհատը: Այսինքն, սա ավելի նեղ խումբ է, մինչև անգամ կարող է այստեղ հանդես գալ միայն անհատը, քան նախորդը:

Անհատական կամ ինդիվիդուալ իրավագիտակցությունը առանձնանում է իր զարգացման տարբեր աստիճաններով: Ըստ տարբերում ենք 2 աստիճան՝

1. անհատական իրավագիտակցության տարրական աստիճան
2. բարձր աստիճան

Ներքոհիշյալում փորձենք բացատրել թե ինչ են իրենից ներկայացնում դրանք: Տարրակ (կամ ավելի ճիշտ կլինի ասել ցածր աստիճան) անհատական իրավագիտակցությունը արտահայտում է վարքի իրավական նորմերի

համաձայնեցված կոնկրետ իրավանշանակալից գործողությունների էմպիրիկ պատկերացում: Իրավագիտակցության ավելի բարձր աստիճան առաջանում է իրավական ավելի բարդ դրության՝ իրավական ինստիտուտների հասարակությունում մարդու իրավական կարգավիճակի, դերի գիտակցման ժամանակ:

Անհատական կամ ինդիվիդուալ իրավագիտակցության բարձր աստիճանը բնութագրվում է իրավական համակարգի նկատմամբ հայացքների ամբողջության ժամանակ, իրավունքի սոցիալական նշանակության գիտակցման, նրա հարթության գնահատման, իրավական իդեալոգիայի ըմբռնմամբ: Սա իրավագիտակցության կոնցեպտալիզացիան է:

Իրավագիտակցությունը չի կարելի է դիտել նաև որպես անձի հոգեկան ձևավորում: Իրավագիտակցությունը բնութագրվում է անձի կողմից հասարակական արժեքների նկատմամբ իր վերաբերմունքով, գնահատականով, իր ինքնակարգավորման ընդունակությամբ:

Պետությունները պետք է ստեղծվեն իրավունքի ուժով, ստորադասվեն իրավունքին և հանդես գալով իրավունքի հետ, մեծ հաշվով պետք է կոչված լինեն ծառայելու անձանց բարեկեցությանը: Սա է պետության հիմնական իմաստը: Միաժամանակ հասարակությունը պետք է օժտված լինի բարձր իրավագիտակցությամ և ունենա իրավական մշակույթ, որն էլ իր հերթին երաշխքին է իրավական պետության գոյության:

Պետության հիմնական ֆունկցիան կայանում է նրանում, որ ապահովի իր տարածքում բնակվող անձանց իրավունքների եվ ազատությունների իրացումը, ապահովի սոցիալական արդարությունը և ձևական հավասարությունը, անձանց անվտանգությունն ու բարեկեցիկ և արժանապատիվ կյանքը, միաժամանակ իրավունքներն էլ պետք է կանխորոշի հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագիծը:

Ըստ Խռոպանյուկի իրավագիտակցությունն իրենից ներկայացնում է գաղափարների, հայացքների զգացմունքների, ավանդույթների ապրումների ամբողջություն, որն արտահայտվում է մարդկանց վերաբերմունքը հասարակական կյանքում իրավական երևույթների նկատմամբ: Դա օրենսդրության, օրինականության, արդարադատության մասին իրավաչափ կամ ոչ իրավաչափ վարքի մասին պատկերացումն է:

Հասարակական իրավագիտակցությունն ընդհանրացումն է իրավական հայացքները, գաղափարները, ավանդույթները, որոնք մշակում են առանձին մարդկանց (անհատների) կողմից:

Անհատական իրավագիտակցությունը իրավունքի մասին կոնկրետ անձի զգացմունքներն ու պատկերացումներն են:

Հասարակական իրավագիտակցությունը զարգանում է առանձին անհատների իրավագիտակցության միջոցով: Սակայն, այն անհատի իրավագիտակցությունից անհամեմատ հարուստ է, քանի որ արտացոլում է հասարակության իրավական կյանքն ամբողջությամբ:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ճշմարտությունն այն է, որ ժամանակակից իրավական մշակույթին ներհատուկ են այնպիսի որակական բնութագրեր, ինչպիսիք են՝ անձի իրավունքների և ազատությունների որոշիչ նշանակությունը հասարակական և պետական կյանքի կազմակերպման մեջ, զանգվածային իրավագիտակցության մեջ օրենքի և իրավակարգի, իրավունքի տիրապետման գաղափարների ու արժեքների նկատմամբ հարգանքի զգացմունքի հաստատումը, սահմանադրականության և իրավական օրենքի գերակայության սկզբունքի իրականացնումը, պետության բոլոր ճյուղերի արդյունավետ

գործունեությունը, պետության վրա քաղաքացիական հասարակության ներգործության և դրա գործունեության նկատմամբ վերահսկողության օրինական ձևերի, միջոցների ու ընթացակարգերի ճյուղավորված համակարգը և այլն:

Իրավագիտակցությունը իրավունքի՝ որպես սոցիալական իրականության առանձնահատուկ երևույթի գիտակցման ձև է:

Իրավագիտակցության մեջ սերտորեն համատեղում և փոխներգործվում են 3 բաղադրատարր՝

1. Ճանաչողական
2. Գնահատող
3. Կարգավորող

Իրավագիտակցության ճանաչողական գործառույթը այն բանի գիտակցության մեջ է, թե ինչ է իրավունքը և իրականացվու՞մ է առանձին իրավական երևույթների ու ամբողջությամբ իրավունքի հայտնաբերման, արտահայտման և իմաստավորման տարբեր ձևերով (զգայական, կերպարային, տրամաբանական-հասկացական):

Իրավագիտակցության գնահատող գործառույթն իրավունքի մասին որոշակի արժեքային պատկերացումների և գաղափարների ձևավորման մեջ է, որոնցից ելնելով՝ իրավագիտակցության սուբյեկտը գնահատում է (դրական կամ բացասական) գործող իրավունքը և իրական իրավական իրողությունը:

Իրավագիտակցության կարգավորիչ գործառույթը սուբյեկտի կողմից կոնկրետ գործողություններում (իրավաչափ կամ ոչ իրավաչափ բնույթի) գործող իրավունքի պահանջների վերաբերյալ իր վարքագծային դիրքորոշման (վարքագծային մոդելի) գիտակցման, որոշման եվ իրականացման մեջ է:

«Հասարակագիտություն» առարկայի միջոցով աշակերտները կարողանում են իմաստավորել «մարդուց դեպի պետություն» թեզը, որի իմաստն այն է, երբ անձն ունի լիակատար ազատություն և անձի ազատությունը սահմանափակվում է միայն այնտեղ են այնքանով, որտեղ և որքանով սկսվում է այլ անձի ազատությունը, իսկ պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով ու ազատություններով: Ավելին, պետությունը կոչված է հետևելու ու երաշխավորելու անձի իրավունքները՝ սահմանելով համապարտադիր նորմեր, որոնց հիմքում պետք է լինեն անձի ազատությունները և իրական կյանքից առաջացած օբյեկտիվ իրականությունը:

Պետությունը չի ստեղծում անձի իրավունքները, այլ ճանաչում և պաշտպանում է այն:

«Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրելով՝ երեխան սկսում է գիտակցել և հասկանալ, որ պետությունը ստեղծոի, անձի իրավունքները, այլ ճանաչում և պաշտպանում է այն:

Այլ կերպ ասած, ցանկացած անձ ի ծնե ունի անօտարելի իրավունքներ և ազատություններ, անձը ծնվում է ազատ, իսկ պետության խնդիրն է ճանաչել այդ ազատությունները և պաշտպանել դրանք, հակառակ պարագայում պետությունը չունի գոյության իրավունք:

Միաժամանակ, պետությունը, ճանաչելով և երաշխավորելով անձի բնականոն իրավունքներն ու ազատությունները և պաշտպանելով այն, պետք է սահմանափակված լինի հենց այդ իրավունքներով, քանի որ պետությունը ստեղծել է հենց դրա համար:

Աշակերտները գիտակցաբար մոտենում են այն գաղափարին, որ իրավական պետության առաջին, բայց ոչ վերջին ժողովրդավարական ընտրությունների անցկացումն է:

Այս ամենի կարևորագույն երաշխիքն է հասարակության (որպես մեկ միասնական երևույթի) իրավագիտակցության աստիճանը, որքան բարձր է այն, այնքան մեծ է երաշխիքը, որ տվյալ պետությունում չեն հաստատի բռնապետական կարգեր:

«Հասարակագիտություն» առարկան հստակ սովորեցնում է, որ անձը իրավագիտակցություն ձևավորելու համար նախ և առաջ պետք է ուշադիր կարդա երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը: Դրանից հետո անպայմանորեն կծագեն հարցեր, որոնց պատասխանները կարելի է գտնել, օրինակ, օրենքներում, որոնք ավելի կոնկրետ են այդ հարաբերությունները կարգավորում և տեղակայված են ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում՝ www.parlament.am: Իսկ որպեսզի իրավագիտակցության դերն ավելի հստակ աշակերտը կարողանա պատկերացնել, կարելի է դրա կարևորությունը ներկայացնել որոշակի օրինակների հիման վրա:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածում ասվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»: Իրավաբանական օգնություն ստանալու բաղկացուցիչ մաս է կազմում նաև նրա անհատուցելիությունը, քանի որ առօրյա կյանքում լինում են դեպքեր, երբ քաղաքացին ի վիճակի չէ կատարելու նման չափերի ծախսեր:

Այն, որ մարդիկ փորձում են իրենց իրավունքները պաշտպանել, շատ հաճախ խոսում են այն մասին, որ Հայաստանում մարդկանց իրավագիտակցությունն էապես

աճում է: Եվ անշուշտ, այս հարցում ահռելի դեր է կատարում «Հասարակագիտություն» առարկան:

Առանց իրավագիտակցության բարձր մակարդակի չենք կարող ունենալ իրավական պետություն: Այն մեր պետության առաջնահերթ խնդիրներից մեկն է:

«Հասարակագիտություն» առարկան նպաստում է երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

Ուսումնասիրելով «Հասարակագիտություն» առարկան՝ անձի մոտ դեռահաս տարիքից արդեն երևում է մարդկանց իրավագիտակցության մակարդակը:

Չգիտեմ, որքանով է ճիշտ կամ սխալ, բայց արտասահմանում նույնիսկ 7 տարեկան երեխան իր իրավունքները թեկուզ ծնողի կողմից խախտվելու դեպքում դիմում է համապատասխան մարմիններին: Դա ողջունելի է այնքանով, որ արդեն այդ տարիքում նրանք գիտեն իրենց իրավունքները:

«Հասարակագիտություն առարկան նպատակ ունի հասարակության լայն շրջանում ուսուցանել օրենքը և դրա կիրառման ձևերը:

Հասարակագիտության զարգացման զուգընթաց իրավագիտակցության դերը աճում է, ինչը սուբյեկտիվ գործոնի դերի աճման բնականոն հետևանքը, հասարակական կյանքի աճող իրականացման արդյունքն է: Իրավագիտակցության մակարդակի հետ ուղղակիորեն կապված է իրավունքի գործողության իրավական կարգավորման արդյունավետությունը:

Իրավագիտակցությունը գոյություն ունի «մինչև» իրավունքը, իրավունքից «հետո» և նրան «զուգահեռ»:

Իրավագիտակցությունը հանդիսանում է՝

1. հասարակության զարգացման օբյեկտիվ պահանջմունքները արտացոլող աղբյուրը,
2. իրավունք կյանքում կենսագործելու պարտադիր մեխանիզմներից (գործիքներից) մեկը,

վարքագիծը (գործողությունը և անգործությունը) իրավունքի նորմերին համապատասխան գնահատելու միջոցը:

Քաղաքացիական հասարակությունը բարձր իրավագիտակցություն ունեցող քաղաքացիներն են:

Հայաստանում իրականացվող իրավական բարեփոխումների շրջանակներում չափազանց կարևոր է իրավական կրթության և իրավական դաստիարակության դերն ու նշանակությունը: Բարեփոխումը կարող է արդյունավետ և ամբողջական

լինել, եթե հանրության իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակը բարձր է:

Եզրակացություն

«Հասարակագիտություն» առարկայի միջոցով աշակերտները կարողանում են իրավունքի և իրավագիտության գիտելիքներ ձեռք բերել և իրենց մոտ զարգացնել իրավագիտության մակարդակը:

Ինչպես անցյալում, այնպես էլ հիմա ժողովրդի վիճակի բարելավումը պետք է տեսնել ամուր դպրոցի մեջ, հենվել դպրոցի վրա, օգնել դպրոցին, նպաստել նրա կրթադաստիարակչական գործունեության կատարելագործմանն ու ճիշտ իրականացմանը:

«Հասարակագիտություն» առարկայի շնորհիվ աշակերտները կստանան իրավագիտակցության բարձրացման աշխարհայացքի զարգացման հնարավորություն, ինչպես նաև կսովորեն գնահատել մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Աշակերտներին հնարավորություն է տրվում բարձրացնել իրենց իրավագիտակցության մակարդակը և զարգացնել աշխարհայացքը:

Դպրոցը շատ մեծ և կարևոր դեր ունի աշակերտների շրջանում արատավոր երևույթների կանխարգելման գործում:

«Տգիտություն մայրն է բոլոր հանցագործությունների, հանցագործությունը՝ նախ և առաջ անմտություն է»

Բալզակ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հասարակության իրավագիտակցության դրսևորումը քաղաքական գործընթացներում» Ա. Ավագյան
2. «Պետության և իրավունքի տեսություն» Խռոպանյուկ, 2-րդ հրատարակչություն, էջ 245
3. «Իրավագիտություն» Վ. Ա. Ներսեսյանց, Երևան 2002
4. ՀՀ Սահմանադրություն
5. Проблемы формирования правовой культуры учащийся молодежы: теория и практика.
   Учётные записи УО ВГУ им. П. Машерова. Том 7, 2008г. стр. 76